ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՈՒՄ

ՄԽԻԹԱՐՅԱՆ Ա. Բ.

1988 թ. դեկտեմբերյան ավերիչ երկրաշարժից տարիներ են անցել, բայց դեռ վաղ է խոսել երկրաշարժի հետևանքներն ամբողջությամբ վերացնելու մասին: Չնայած խորհրդային իշխանությունները ժամանակին ընդունեցին մի շարք որոշումներ ու կարգադրություններ, որոնցով նախատեսվում էր 1989-1990 թթ. Հիմնականում վերականգնել աղետի գոտին, սակայն դա լիովին իրագործվեց մասամբ: Աղետի գոտում մեծ ծավալի աշխատանքներ կատարած խորհրդային հանրապետությունների շինարարական կազմակերպությունները 1991 թ. աշնանը, իսկ Ռուսաստանի Դաշնության շինարարները 1993 թ. հեռացան Հայաստանից՝ իրենց հետ տանելով շինարարական տեխնիկայի մեծ մասը: Դրա հետևանքով, փաստորեն, 1991 թ. աշնանից իրականացվող աշխատանքների ամբողջ ծանրությունն ընկավ մեր հանրապետության շինարարական համալիրի ուսերին[1]: Բացի այդ, վերականգնողական աշխատանքներին մեծ վնաս հասցրեցին 1989 թ. Սեպտեմբերից Ադրբեջանի իրականացրած շրջափակումը[2], պատերազմը Լեռնային Ղարաբաղում, փախստականների առկայությունը և հանրապետությունում տիրող սոցիալ-տնտեսական ու էներգետիկ ճգնաժամը:

Հարց է ծագում, եթե ԽՍՀՄ-ը չփլուզվեր, աղետի գոտին երկու տարում վերականգնելու մասին կառավարության հավաստիացումները կիրականանայի՞ն, թե՞ ոչ: Պատասխանը միանշանակ ոչ է, որովհետև առաջին տարում տեղադրվում էին շինարարական բազաները, և աշխատանքներ էին կատարվում քաղաքների ու գյուղական բնակավայրերի կառուցապատման նախագծերի մշակման և հաստատման ուղղությամբ: Շինարարությունը մեծ թափով սկսվեց, և եթե այդ տեմպերը պահպանվեին, գոնե անօթևանության խնդիրը չորս տարվա ընթացքում հնարավոր կլիներ լուծել: Սակայն փաստն այն է, որ այն, ինչ արվեց, նախատեսվածի ընդամենը 1/3-ն էր, իսկ 2/3-ը մնաց անավարտ:

Ստեղծված իրավիճակից դուրս գալու և վերականգնողական աշխատանքների նոր լիցք հաղորդելու համար ՀՀ կառավարությունը 1994 թ. հունվարի 7-ի թիվ 17 որոշումով հաստատեց աղետի գոտու վերականգնման և շինարարական աշխատանքների հանրապետական նպատակային ծրագիր[3]: Ճշտվեցին երկրաշարժի հետևանքով տուժած բնակավայրերի առանձին ոլորտների վերականգնման ենթակա ծավալները և իրականացման ժամկետները:

---

[1] Հայաստանի ազգային արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), ֆ. 1, ց. 127, գ. 695, թ. 14-19: ֆ., 1, ց. 87, գ. 3, թ. 5, ֆ. 113, ց. 160, գ. 609, թ. 11-15: *Армения, декабрь, 88, Е., 1990, с 477-485.*

[2] Շրջափակում, Ժամանակագրություն, Ե., 1990:

[3] ՀԱԱ, ֆ., 1185, գ. 81, թ. 2:

Ընդհանուր առմամբ 1990-ականների կեսերը պարապուրդային տարիներ էին, և Շիրակի մարզը և, մասնավորապես, Գյումրին մատնվեց անտերության: Ճիշտ է, Համաշխարհային բանկի միջոցների հաշվին փոքր ծավալով շինարարություն իրականացվեց, սակայն աշխատանքները կատարվում էին կիսատ-պռատ, և շենքերը շահագործման էին հանձնվում անավարտ, որն էլ իր հերթին ստեղծում էր նոր հիմնախնդիրներ[4]: Կատարվող աշխատանքները չէին համապատասխանում քաղաքների զարգացման և շուկայական տնտեսության չափանիշներին, քանի որ վերականգնման ծրագրերը մշակվել էին այլ ժամանակի ու համակարգի պայմաններում: Նախկինում ընդունված հատակագծերը չափազանց ծավալուն էին և՛ նախագծման, և՛ իրականացման արժեքի գնահատման տեսակետից: Պատճառն այն է, որ ժամանակին հարմար էր Խորհրդային Միության բոլոր հանրապետություններից ժամանած նախագծողներին մեծածավալ բյուջե ներկայացնել: Հսկայական ներդրումներ էին արվել նոր տարածքների շինարարության մեջ, սակայն դրանց մեծ մասը կարելի է դիտարկել որպես «կորսված ծախք»[5]:

Նախկինում շինարարական աշխատանքները կատարվում էին միայն նոր թաղամասերում՝ սակավ ուշադրություն դարձնելով հների վերականգնմանը: Դրա հետևանքով անավարտ բազմաբնակարան շենքերը և սպասարկման ենթակառույցները գտնվում են աղետի գոտու քաղաքների նոր թաղամասերի մեծ, քաղաքաշինական առումով անկառավարելի տարածքներում և մինչև օրս էլ անավարտ վիճակում քայքայվում են: Թեև շարունակ փորձ էր արվում լուծել աղետի գոտու վերականգնման խնդիրը, փաստն այն է, որ աշխատանքներն աշխուժացան միայն 1998 թ., երբ ընդունվեց աղետի գոտու վերականգնման առաջնահերթ ծրագիր[6], որով պետական ուղղակի միջամտությամբ և ռեսուրսներով առաջնային դարձան երկրաշարժից տուժած բնակավայրերի բնակարանային ու սոցիալական ոլորտի խնդիրների լուծումը, ինչպես նաև սահմանվեցին անօթևան ընտանիքները բնակարաններով ապահովելու և սոցիալական ոլորտի օբյեկտների վերականգնման առումով պետության ստանձնած պարտավորություններն իրականացնելու ուղիները: Բնակարանային շինարարությունից բացի, ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալության և Հայաստանի կառավարության կողմից 2001 թ. աղետի գոտում կիրառվեց «Բնակարանի գնման վկայագրեր» ծրագիրը, որի նպատակն էր երկրաշարժի հետևանքով բնակարանազուրկ դարձած ընտանիքները մշտական բնակարաններով ապահովելը: Միաժամանակ, բնակչությանը հնարավորություն էր տրվում ազատորեն ընտրելու իր բնակության վայրը և բնակարանի որակը: Սակայն բնակարանների շուկայական արժեքի և տրամադրված վկայագրերի արժեքների միջև հաճախ նկատվում են էական տարբերություններ: «Աղետի գոտու վերականգնման մասին» ՀՀ օրենքի դրույթների համաձայն՝ 2001 թ. կազմվեց և ընդունվեց «Աղետի գոտու վերականգնման

[4] Հինգշաբթի, 15. VII. 2004:
[5] Աղետի գոտու նոր բնակարանային ռազմավարություն, Ե., 1998:
[6] Աղետի գոտու վերականգնման առաջնահերթ ծրագիր, Ե., 1998:

համալիր ծրագիր» (այսուհետև՝ Համալիր ծրագիր)[7], որով նախատեսվում էր աղետի գոտում, նախկինում ընդունված որոշումների համաձայն, վերականգնողական աշխատանքների շարունակում՝ կիրառելով նոր մոտեցումներ, որոնք նպատակաուղղված են երկրաշարժի հետևանքով ավերված բնակարանային ֆոնդի բարելավմանը, ինչպես նաև բնակավայրերում բնակության համար բարենպաստ պայմանների ստեղծմանը:

Սակայն աղետի գոտու մի մասում, առավել ևս Գյումրիում, չնայած վերջին տարիների իրականացված ծավալուն աշխատանքին, աղետի հետևանքները շարունակվում են: Քաղաքի շինարարական վերականգնման գործում լուրջ բեկում ապահոված աշխատանքների իրական և հոգեբանական արդյունքները դժվար է գերագնահատել: Դրա հիմքում ընկած են վերջին տարիներին աղետի գոտու վերականգնման օրենսդրական ապահովվածությունը, այսինքն՝ լավ թե վատ պետական որոշակի քաղաքականությունը, շինարարական հարցերում հանրապետության ղեկավարության հետևողականությունը: Անգնահատելի է Քըրք Քըրքորյանի ներդրումը, առանց որի, կարճ ժամանակում նման շինարարություն իրականացնել պարզապես հնարավոր չէր: 1989-2000 թթ. Գյումրիում կառուցվել է մոտ 9500, հաջորդ երկու տարիներին՝ 1500, իսկ 2003 թ.՝ 2500 բնակարան:

Գյումրիում դպրոցական ու առողջապահական օբյեկտների վերականգնումը մոտեցել է ավարտին: «Լինսի» ծրագրով ծավալուն աշխատանք կատարվեց մշակութային օբյեկտների վերականգնման ու վերանորոգման, քաղաքի կենտրոնական փողոցների մի մասի բարեկարգման ու ասֆալտապատման ուղղությամբ: 2002-2003 թթ. ամբողջ քաղաքը եռուն շինհրապարակի էր վերածվել: Հիմա, երբ «Լինսի» ծրագիրն ավարտվել է, երկրաշարժից տուժածներին բնակարաններով ապահովելը դարձել է անվերջանալի խնդիր՝ կասկածի տակ դնելով «վերականգնման գոտին» երբևէ ավարտին հասցնելու ծրագիրը: Երբ «Լինսի» հիմնադրամը 2001 թ. նախաձեռնում էր բնակելի շենքերի կառուցում, հայտարարություններ արվեցին, որպեսզի երկրաշարժի հետևանքով բնակարանը կորցրած քաղաքացիները հաշվառվեն: Գյումրիում հաշվառվել էր 6200 ընտանիք, իսկ հիմնադրամին ներկայացվել էր 7000 բնակարանի հայտ: Սակայն «Լինսի» հիմնադրամով բնակարանային շինարարությունը ավարտվելուց հետո պարզվում է, որ քաղաքում 2005 թ. փետրվարի առաջին շաբաթվա տվյալներով դեռևս 4000 անօթևան ընտանիք կար[8]: Շատերին անհասկանալի է անօթևանների թվի աճը: Այս խառնաշփոթին նպաստել է բնակարանների բաշխման գործընթացը մարզպետարանների իրավասությանը հանձնելու մասին ՀՀ վարչապետի 2002 թ. դեկտեմբերի 21-ի որոշումը: Եթե հանձնվելու էր՝ թող ամբողջապես հանձնվեր, և քաղաքապետարանն այլևս չզբաղվեր այդ խնդրով: Հակառակ պարագայում ավելի նպատակահարմար չէ՞ր բաշխումը թողնել քաղաքապետարանին: Ինչո՞վ է հիմնավորված, որ մարդիկ հաշվառման են կանգնում քաղաքային ատյանում, իսկ բնակարան ստանում՝ մարզայինում: Կամ արդյոք պարտադի՞ր է դատարանի որոշմամբ

---

[7] Աղետի գոտու վերականգնման համալիր ծրագիր, Ե., 2001:

[8] Հինգշաբթի, 17. II. 2005:

անօթևան ճանաչվելը: Հատկանշական է, որ քաղաքապետարանի և մարզպետարանի վիճակագրությունները՝ կապված անօթևանների «բանակի» հետ, տարբերվում են: Ու եթե հաշվի առնենք շինարարական ծավալների տասնապատիկ նվազումը, ապա պարզ կդառնա, որ անորոշ ժամանակով կհետաձգվի Գյումրիի հին միջուկից տնակների դուրսբերման գործընթացը: Միաժամանակ չի կատարվի ՀՀ Նախագահ Ռ. Քոչարյանի հրահանգը, ըստ որի, աղետի գոտում առանց բնակարանի չպիտի մնա և ոչ մի ընտանիք: Այս բոլորով հանդերձ՝ անհնար է գուշակել, թե ինչ է սպասվում ապագայում:

Սակայն Գյումրին կդադարե՞ր աղետի գոտի լինելուց, եթե այսօր իսկ բոլոր բնակարանները կառուցված լինեին, բոլոր անօթևանները՝ տնավորված: Ահա այստեղ է այն ոչ պակաս կարևոր հարցադրումը, որը գուցե ավելի շատ է հուզում այդ քաղաքի բնակիչներին: Ամենալավատեսական գնահատումներով այս տարիների ընթացքում քաղաքից հեռացել է նրա բնակչության մոտավորապես 1/3-ը, իսկ մնացողների մեծամասնությունն աշխատատեղերի բացակայության պատճառով ապրում է կարիքի և թշվառության մեջ:

Չնայած պաշտոնական վիճակագրության տվյալներով 1989-2001 թթ. մարզում բնակչության թվաքանակն ավելացել է ավելի քան 42400 մարդով (13,3%-ով)[9], սակայն այն իրականում դեռևս շարունակվող արտագաղթի հետևանքով զգալիորեն պակասում է[10]:

Ինչպես ՀՀ-ում, այնպես էլ Շիրակի մարզում առկա բնակչության թվաքանակի վերաբերյալ հավաստի տվյալները շարունակվող արտագաղթի թերահաշվառման պատճառով բացակայում են: ՀՀ-ից արտագաղթի վերաբերյալ առավել արժանահավատ տվյալներ առկա են միայն օդային տրանսպորտով մեկնողների և ժամանողների ցուցանիշների տարբերության գծով, որը, ըստ ՀՀ քաղաքացիական ավիացիայի վարչության տվյալների, 1992-2005 թթ. կազմել է մոտ 691 հազար մարդ: Սկսած 2000 թ. մայիս-հունիսից՝ այդպիսի հաշվառման են ենթարկվում նաև երկաթգծի և ավտոտրանսպորտային միջոցները: 2000-2005 թթ. այդ միջոցներով մեկնողների թիվը ժամանողների համեմատ գերազանցել է 35,9 հազար մարդով:

Հետևաբար, ամենահամեստ հաշվարկներով այժմ հանրապետության բնակչության առկա թվաքանակը մոտ 726,9 հազարով պակաս է մշտական գրանցում ունեցող բնակչության թվաքանակից: Եթե նկատի ունենանք, որ այդ երևույթը բնորոշ է հանրապետության բոլոր մարզերին, ապա պարզ կդառնա, որ Շիրակի մարզի առկա բնակչության թվաքանակը և՛ էապես պակաս է մշտական բնակչությունից, և՛ կազմում է 270142 մարդ: Նման ցուցանիշը ժողովրդագրական աղետի նախանշան է:

Մարզը պարզապես դատապարտված վիճակում է հայտնվել նաև այն պատճառով, որ բոլոր այս տարիներին չմշակվեց և չիրականացվեց տնտեսության

---

[9] Շիրակի մարզ, Ե., 2002, էջ 52:

[10] **Խոջաբեկյան Վ. Ե.,** Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը (XIX-XX դարերում XXI դարի շեմին), Ե., 2001, էջ 229, Մարգարյան Ն., Ժողովրդագրական գործընթացները Շիրակի մարզում 1989-1998 թթ., Ե., 2000, էջ 13:

վերականգնման ռազմավարություն: Իսկ ինչ-ինչ քայլեր էլ, որ երբեմն ձեռնարկվել են, մեծ մասամբ ձախողվել են (շաքարի գործարանի «վերագործարկումը», Հայաստանում քրիստոնեության ընդունման 1700-ամյակի տարում քաղաքն ու մարզը զբոսաշրջության ծրագրերում լայնորեն ընդգրկելը և այլն):

Գյումրիի վերականգնման մասին ՀՀ օրենքում անգամ չի շոշափվում հարկային դաշտը, այլ կերպ ասած՝ աղետի գոտու համար հարկային արտոնություններ չեն նախատեսված: Իսկ ներդնողները (եթե այդպիսիք երևում են) վստահ չեն, թե ինչ արդյունք է սպասվում ներդրված գումարներից:

Շիրակի տարածաշրջանը թեև հանրապետությունում երրորդն է իր համայնքների թվով[11], սակայն վերջին տեղում է տնտեսությանն առնչվող բոլոր ցուցանիշներով: Դրան նպաստում է նաև այն, որ պետական ու բարեգործական միջոցները, ըստ մարզերի, համաչափ չեն բաշխվում:

Անկասկած, մարզի և, մասնավորապես, Գյումրիի առաջընթացն ու առկա հիմնախնդիրների լուծումը նախ և առաջ պայմանավորված են արտադրատնտեսական ոլորտի և հատկապես արդյունաբերության զարգացումով: Շիրակի տարածքում գործող արդյունաբերական ձեռնարկությունների արտադրական հզորությունները ներկայումս օգտագործվում են 5-10% ով, իսկ գրեթե երեք տասնյակ ձեռնարկություններ ընդհանրապես արտադրանք չեն թողարկում: 1990 թ. հետո ձեռնարկություններում չեն ներդրվել ո՛չ նոր սարքավորումներ, ո՛չ էլ առաջատար տեխնոլոգիաներ: Ձեռնարկությունների մեքենասարքավորումների միջին տարիքը 15-ից բարձր է, եթե դրանք նույնիսկ ֆիզիկապես անվթար են, ապա բարոյապես վաղուց մաշված են: Ֆինանսական միջոցների անբավարարությունը, հումքային պաշարների սակավությունը և բնակչության ցածր գնողունակությունը արգելակում են ձեռներեցության զարգացումը: Տնտեսության ներկա պայմաններում արդյունաբերական հզորությունների վերականգնումը նախ և առաջ պետք է հիմնվի հանրապետության ներքին հնարավորությունների վրա: Այսօր, առանց պետական աջակցության, հարկային բարենպաստ տարածքային քաղաքականության և ֆինանսավորման արտաքին աղբյուրների, անհնար է արդյունաբերության զարգացումը, շուկայի ընդլայնումը և մարզի բնակչության զբաղվածության հիմնախնդիրների լուծումը:

Այսպիսով, տարիներ անց էլ աղետի գոտու հիմնախնդիրը լուծված չի կարելի համարել: Գյումրին ունի լուրջ ուշադրության կարիք, ունի աշխատատեղերի խնդիր, ու, իհարկե, այս գործում, միայն օրենքներ գրելով, հարցը չի լուծվի, քանզի որքան էլ որ կատարյալ լինի այդ օրենքը, եթե այն չի վերահսկվում, չի կատարվում ըստ պատշաճի, և քանի դեռ օրենսդիր, գործադիր ու տեղական ինքնակառավարման մարմինների միջև չի հաստատվել հստակ կանոնակարգված աշխատանք, ապա աղետի գոտու հիմնահարցը այդպես էլ չլուծված կմնա, իսկ օրենքները՝ թղթի վրա:

---

[11] Ներկայումս մարզն ունի 119 համայնք, որից 116-ը գյուղական, 3-ը՝ քաղաքային, 128 գյուղական բնակավայր և 3 քաղաք:

ОСНОВНЫЕ ЗАДАЧИ УСТРАНЕНИЯ ПОСЛЕДСТВИЙ ЗЕМЛЕТРЯСЕНИЯ В ШИРАКСКОМ МАРЗЕ

МХИТАРЯН А. Б.

Резюме

Прошло немало лет после землетрясения, но следы бедствия в Ширакском марзе еще видны.

Бывшим правительством Союза было принято решение о восстановительных работах в зоне бедствия с 1989 по 1990 гг. Однако в связи с распадом СССР восстановительные работы были осуществлены частично. Лишь в 1998 г. была разработана первоочередная программа, на базе которой в 2001 г. была принята комплексная программа восстановления зоны бедствия.

На сегодняшний день, в отличие от других регионов Армении, в Ширакском марзе имеется немало проблем, в их числе жилищные, недостаток рабочих мест, высокий процент миграции, для решения которых необходима помощь со стороны правительства.